ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 07.01.2022թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ՍՑ-ՆԳ-2021/321

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 09.12.2021թ. թիվ 26/26-1/20213-2021 գրությամբ «ԷՖԲիԷյ» ՍՊ և «ՋիԱրՋի» ՍՊ ընկերություններին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի (հետայսու նաև՝ Պատվիրատու) 02.12.2021թ. թիվ 09/3068 գրության հիման վրա, 09.12.2021թ. թիվ 26/26-1/20213-2021 գրությամբ նախաձեռնել է «ԷՖԲիԷյ» ՍՊ և «ՋիԱրՋի» ՍՊ ընկերություններին (հետայսու նաև՝ Ընկերություններ) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>«ԷՖԲԻԷՅ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«ԷՖԲԻԷՅ» ՍՊԸ-ն ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ, հայտնել է հետևյալը.

««Էֆ Բի Էյ» ՍՊԸ-ն մասնակցել է «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կողմից հայտարարած թիվ «ԷԱՃԱՊՁԲ-2022/4-3-ԵՊԲՀ» ծածկագրով գնման ընթացակարգին և գնանշման հարցման ընթացակարգին և eauction.armeps.am համակարգով ներկայացրել է հայտ:

2021թ-ի նոյեմբերի 24-ին էլեկտրոնային ավտոմատ համակարգով ստանում ենք «Դիմում-հայտում շտկում կատարելու մասին», որում մասնավորապես ասված է՝

Ձեր Դիմում-Հայտարարությունը, որում նկատվել են հետևյալ թերությունները. Բացակայում է Հավելված 1.2-ը /Իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիրը/, անհրաժեշտ է ներկայացնել: 39-րդ չափաբաժնի համար անհրաժեշտ է հստակեցնել տարողությունը /առանց «ոչ պակաս քան» արտահայտության/, ներկայացնել ապրանքային նշանը կամ նշանները և դրանց համապատասխան արտադրողի անվանո! ումը կամ անվանումները /ներկայացված են մի քանի երկրների անվանումներ, որոնց ներկայացման պահանջը հրավերով սահմանված չէր/:

Սահմանված ժամկետում «ԷՖ Բի Էյ» ՍՊԸ-ի կողմից կատարվում է բոլոր պահանջված շտկումները և կրկին eauction.armeps.am համակարգի միջով բեռնվում:

Մասնավորապես որպես ապրանքային նշան մեր կողմից ներկայացվել է «Ուլտրաձայնային գել» և որպես արտադրող ներկայացվել են բազմաթիվ արտադրողներ:

2021թ-ի նոյեմբերի 29-ին ստանում ենք ծանուցում՝ «Չափաբաժնի մերժում», որում ասվում է

Հարգելի ԷՖԲԻԷՅ ՍՊԸ,

Դուք դիմել եք «ԷԱՃԱՊՁԲ-2022/4-3-ԵՊԲՀ» ծածկագրով էլեկտրոնային աճուրդին: Էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովը ուսումնասիրել է էլեկտրոնային աճուրդի մասնակցության Ձեր Դիմում-Հայտարարության շտկումը, որում նկատվել են հետևյալ թերությունները. ներկայացված բազմաթիվ արտադրող կազմակերպություններին համապատասխան չեն ներկայացվել ապրանքային նշաններ ինչպես նշված էր 2-րդ արձանագրության 4-րդ կետի 3-րդ ենթակետում և պահանջված էր էլեկտրոնային ձևով

աճուրդների իրականացումն ապահովող համակարգում, ինչի արդյունքում Ձեր հայտը N 39 չափաբաժնի մասով մերժվում է

Մերժման անհասկանալի և աբսուրդի հասնող պատճառաբանություն.....

Այո, մեր կողմից հայտով ներկայացված բազմաթիվ արտադրող կազմակերպությունների կողմից արտադրվող սոնոգրաֆիայի գելերը ունեն նույն «Ուլտրաձայնային գել» ապրանքային նշանը և պատվիրատուն ուղղակի իրավունք չուներ մերժելու մեր հայտը, քանի որ մեր կողմից թույլ չի տրվել կարգի և մրցույթային հրավերի պահանջի որևէ խախտում:

Պատվիրատուն նաև չի կարող ենթադրել կամ համոզված լինել, որ «Էֆ Բի Էյ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված արտադրողների սոնոգրաֆիայի գելերը ունեն տարբեր ապրանքային նշաններ, քանի որ պատվիրատուն չունի և չի էլ կարող ունենալ որևէ հիմքեր այդպես մտածելու, թեկուզ միայն նրա համար, որ գոյություն ունի նաև «պայմանագրային արտադրություն» հասկացողություն:

Ի դեպ, Սոնոգրաֆիայի գելը ամբողջ աշխարհում արտադրողներից մեծամասնությունը այն արտադրում է հենց «Ուլտրաձայնային գել» ապրանքային նշանով, որպես ապացույց ուղղակի բերենք մի քանի օրինակ՝

կարող ենք բերել բազմաթիվ այլ օրինակներ ևս:

Համաձայն ՀՀ կառավարության 4 մայիսի 2017 թվականի N 526-Ն որոշման 15-րդ կետի Գնահատող հանձնաժողովի անդամը պետք է ունենա մասնակիցների որակավորումը և առաջարկները գնահատելու համար պահանջվող մասնագիտական կարողություն, ինչը որոշվում է գնման առարկային համապատասխան:

Համադրելով բոլոր փաստերը ունենք հիմնավոր կասկածներ արդյոք գնահատող հանձնաժողովի անդամը ունի նման մասնագիտական որակավորում, թե ոչ:

Եթե այո, ապա արդեն միանշանակ է, որ «էֆ Բի էյ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի մերժումը դուրս է որևէ տրամաբանությունից և օրենսդրական դաշտից և միակ պատճառը, որին հանգում ենք, դա մրցակցության սահմանափակումն է, որը և պատվիրատուն հաջողությամբ իրականացնում է:

Եթե, ոչ, ապա «ԷԱՃԱՊՁԲ-2022/4-3-ԵՊԲՀ» ծածկագրով գնման ընթացակարգը առոչինչ է, քանի որ գնահատող հանձնաժողովը չունի լիազորություններ և հնարավորություն մասնակիցների հայտերը գնահատելու համար:

Այլ մեկնաբանություն պատվիրատուի գործողություններին ուղղակի տալ չենք կարող:

Հաշվի առնելով վերոնշյալ փաստերը, մեկնաբանությունները, խնդրում ենք Ձեզ չբավարարել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից նախաձեռնած ընթացակարգը և «էֆ Բի էյ» ՍՊԸ-ին չներառել Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում»:

«էֆ Բի էյ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/321 ընթացակարգի շրջանակներում 16.12.2021թ. ժամը 09:15-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. <u>«ՋիԱրՋի» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«ՋիԱրՋի» ՍՊԸ-ն ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ, հայտնել է հետևյալը.

««ՋԻԱՐՋԻ» ՍՊԸ-ն մասնակցել է «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կողմից հայտարարած թիվ «ԷԱՃԱՊՁԲ-2022/4-3-ԵՊԲՀ» ծածկագրով գնման ընթացակարգին և գնանշման հարցման ընթացակարգին և eauction.armeps.am համակարգով ներկայացրել է հայտ:

2021թ-ի նոյեմբերի 24-ին էլեկտրոնային ավտոմատ համակարգով ստանում ենք «Դիմում-հայտում շտկում կատարելու մասին»՝, որում մասնավորապես ասվում է

Հարգելի ՋԻԱՐՋԻ ՍՊԸ,

Դուք դիմել եք !ԷԱՃԱՊՁԲ-2022/4-3-ԵՊԲՀ ծածկագրով էլեկտրոնային աճուրդին: Էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովը ուսումնասիրել է էլեկտրոնային աճուրդի մասնակցության Ձեր Դիմում-Հայտարարությունը, որում նկատվել են հետևյալ թերությունները. Բացակայում է Հավելված 1.2-ը /Իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիրը/, անհրաժեշտ է ներկայացնել: 2-րդ և 25-րդ չափաբաժինների համար անհրաժեշտ է ներկայացնել ապրանքային նշանը կամ նշանները և դրանց համապատասխան արտադրողի անվանումը կամ անվանումները /ներկայացված են մի քանի երկրների անվան! ւմներ, որոնց ներկայացման պահանջը հրավերով սահմանված չէր/:\nՄկրտչյան Կարինե Անբավարար Անդամ Բացակայում է Հավելված 1.2-ը /Իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիրը/, անհրաժեշտ է ներկայացնել: 2-րդ և 25-րդ չափաբաժինների համար անհրաժեշտ է ներկայացնել ապրանքային նշանը կամ նշանները և դրանց համապատասխան արտադրողի անվանումը կամ անվանումները /ներկայացված են մի քանի երկրների անվանումներ, որոնց ներկայացման պահանջը հրավերով սահմանված չէր/:: Առաջարկում ենք գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետում շտկել նշված անհամապատասխանություն! ները և ուղղված Դիմում-Հայտարարությունն ուղարկել համակարգի միջոցով: Մուտք գործելու համար սեղմեք այստեղ

Չնայած անհասկանալի էր թե ինչ է նշանակում «Մկրտչյան Կարինե Անբավարար Անդամ» արտահայտությունը, սակայն սահմանված ժամկետում «ՋԻԱՐՋԻ» ՍՊԸ-ի կողմից կատարվել են բոլոր պահանջված շտկումները և կրկին eauction.armeps.am համակարգի միջով բեռնվում:

2021թ-ի նոյեմբերի 29-ին ստանում ենք ծանուցում՝ «Չափաբաժնի մերժում», որում ասվում է

Հարգելի ՋԻԱՐՋԻ ՍՊԸ,

Դուք դիմել եք !ԷԱՃԱՊՁԲ-2022/4-3-ԵՊԲՀ ծածկագրով էլեկտրոնային աճուրդին: Էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովը ուսումնասիրել է էլեկտրոնային աճուրդի մասնակցության Ձեր Դիմում-Հայտարարության շտկումը, որում նկատվել են հետև! ալ թերությունները. 25-րդ չափաբաժնի համար ներկայացված բազմաթիվ արտադրող կազմակերպություններին համապատասխան չեն ներկայացվել ապրանքային նշաններ ինչպես նշված էր 2-րդ արձանագրության 4-րդ կետի 8-րդ ենթակետում և պահանջված էր էլեկտրոնային ձևով աճուրդների իրականացումն ապահովող համակարգում, իսկ 2-րդ չափաբաժնի համար ներկայացված բազմաթիվ արտադրող կազմակերպություններին համապատասխան ՀՀ-ում գրանցված դեղերի պետական գրանցամատյանում (ռեեստր) «Ցեֆտրիաքսոն 1000մգ» ապրանքային նշանով գրանցում չկա, այդ ապրանքային նշանով գրանցված է միայն Արփիմեդ Ս! Պ ընկերության դեղը, սակայն Արփիմեդ ՍՊԸ՝ որպես արտադրողի անվանում հայտով չի ներկայացվել, ինչի արդյունքում Ձեր հայտը N: 2,25 չափաբաժնի մասով մերժվում է:

Պատվիրատուն մերժել է մեր կողմից ներկայացված թիվ 2 և թիվ 25 չափաբաժինները կրկին անհասկանալի պատճառներով:

Ներկայացնում ենք «ՋԻԱՐՋԻ» ՍՊԸ-ի փաստարկները՝

1.Պատվիրատուի կողմից հայտարարված Չափաբաժին 25-ը (Հակափայտացման անատոքսին 1մլ) ներառված չի ոչ հիմնական դեղերի ցանկում, ոչ էլ դեղերի պետական գրանցամատյանում, մինչդեռ համաձայն ՀՀ կառավարության 2 մայիսի 2013 թվականի N 502-Ն որոշման Հայաստանի Հանրապետության առողջապահության բնագավառի պետական կառավարման մարմնի կողմից (այսուհետ՝ լիազոր մարմին) սահմանված՝ Հայաստանի Հանրապետության հիմնական դեղերի ցանկում, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության դեղերի պետական գրանցամատյանում (ռեեստր) ընդգրկված դեղերը ձեռք են բերվում «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված կարգով:

2.Մեր կողմից ներկայացված բազմաթիվ արտադրողներով առաջարկվող ապրանքը ունի նույն «Հակափայտացման անատոքսին 1մլ» անվանումը:

Եթե չափաբաժինը ներառված չի դեղերի պետական գրանցմատյանում և դեղերի հիմնական ցանկում, ապա անհասկանալի թե ինչ սկզբունքներով է պատվիրատուն

գնահատել տվյալ չափաբաժինը և եկել սխալ եզրահանգման, որ հետագայում կարող է մատակարարվել այլ ապրանքային նշանով:

3.Եվ վերջ ի վերջո, եթե պայմանագրի կատարման փուլում կմատակարարվի այլ ապրանքային նշանով ապրանք, ապա պատվիրատուն իրավունք ունի այն չընդունելու, սահմանելու խելամիտ ժամկետ մատակարարելու պայմանագրի տեխնիկական բնութագրին համապատասխանող ապրանք և միայն չմատակարարելու դեպքում միակողմանի լուծել պայմանագիրը:

4.Թիվ 2 չափաբաժնի համար ներկայացված մերժման պատճառը հասնում է արդեն աբսուրդային մակարդակի: Ներկայացնում ենք ստորև ՀՀ-ում գրանցված 1000մգ Ցեֆտրիակսոն ապրանքային նշանով ՀՀ-ում գրանցված դեղերի ցանկը՝

1	Ceftriaxone 1000mg	1000mg; (10) glass vial	ceftriaxone (ceftriaxone sodium)	powder for solution for injection/infusion	Republic of Armenia	Arpimed LLC, Kotayk Marz, Abovyan, 2nd Micro-District, 19 Building
2	Ceftriaxone sodium	1000mg; (1), (20), (40) glass vial	ceftriaxone (ceftriaxone sodium)	powder for solution for i/m and i/v injection	Belarus	Belmedpreparaty RUE, Grodninsky region, Lida, str. Kachana,19/8 for Belmedpreparaty RUE, 220007, Minsk, Fabritsius St., 30, Belarus
3	Ceftriaxone for injection	1000mg; (10) glass vial	ceftriaxone (ceftriaxone sodium)	powder for solution for i/m and i/v injection	China	Reyoung Pharmaceutical Co. Ltd., No 6 Erlangshan Road, Yiyuan County, Shandong Province
4	Ceftriaxon	1000mg; (10) glass vial	ceftriaxone (ceftriaxone sodium)	powder for solution for injection	Ukraine	Kievmedpreparat PJSC, 01032, Kiev, Saksaganskogo street, 139
5	Ceftriaxone sodium	1000mg; (10) glass vial	ceftriaxone (ceftriaxone sodium)	powder for solution for injection	China	Harbin Pharmaceutical Group Co., Ltd., General Pharmaceutical Factory, No 109 Xuefu Road, Nangang District., Harbin
6	Ceftriaxone	1000mg; (10) glass vials	ceftriaxone (ceftriaxone sodium)	powder for solution for injection	China	CR GoSun Pharma, No. 2 Kaifeng Road Street Avenue, Shangmeilin, Futian District, Shenzhen, Guangdong
7	Ceftriaxone 1g powder for solution for injection	1000mg; (10) glass vials	ceftriaxone (ceftriaxone sodium)	powder for solution for injection	UK	CP Pharmaceuticals Ltd., Ash Road North, Wrexham, LL13 9UF- batch releaser, Labesfal-Laboratorios Almiro, S.A, Zona Industrial do Lagedo, Santiago de Besteiros, 3465-157, Portugal- bulk manufacturer, packager, quality control for Wockhardt UK Ltd., Ash Road North, Wrexham, LL13 9UF, UK
8	Ceftriaxone	1000mg; (1) glass vial, (50) glass vials	ceftriaxone (ceftriaxone sodium)	powder for solution for i/m and i/v injection	Russia	"Sintez" OJSC, Pr. Konstitutsii, No. 7, Kurgan, 640008

Ինչպես երևում է ներկայացված ցանկից, կան բազմաթիվ Ցեֆտրիաքսոն անունում գրանցված դեղորայք 1000մգ դեղաչափով:

5.Համաձայն ՀՀ կառավարության 4 մայիսի 2017 թվականի N 526-Ն որոշման 15-րդ կետի Գնահատող հանձնաժողովի անդամը պետք է ունենա մասնակիցների որակավորումը և առաջարկները գնահատելու համար պահանջվող մասնագիտական կարողություն, ինչը որոշվում է գնման առարկային համապատասխան:

Համադրելով բոլոր փաստերը ունենք հիմնավոր կասկածներ արդյոք գնահատող հանձնաժողովի անդամը ունի նման մասնագիտական որակավորում, թե ոչ:

Համադրելով բոլոր փաստերը ունենք հիմնավոր կասկածներ արդյոք գնահատող հանձնաժողովի անդամը ունի նման մասնագիտական որակավորում, թե ոչ:

Եթե այո, ապա արդեն միանշանակ է, որ «ՋԻԱՐՋԻ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի մերժումը դուրս է որևէ տրամաբանությունից և օրենսդրական դաշտից և միակ պատճառը, որին հանգում ենք, դա մրցակցության սահմանափակումն է, որը և պատվիրատուն հաջողությամբ իրականացնում է:

Եթե, ոչ, ապա «ԷԱՃԱՊՁԲ-2022/4-3-ԵՊԲՀ» ծածկագրով գնման ընթացակարգը առ ոչինչ է, քանի որ գնահատող հանձնաժողովը չունի լիազորություններ և հնարավորություն մասնակիցների հայտերը գնահատելու համար:

Այլ մեկնաբանություն պատվիրատուի գործողություններին ուղղակի տալ չենք կարող:

Հաշվի առնելով վերոնշյալ փաստերը, մեկնաբանությունները, խնդրում ենք Ձեզ չբավարարել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից նախաձեռնած ընթացակարգը և «ՋԻԱՐՋԻ» ՍՊԸ-ին չներառել Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում»:

«ՋԻԱՐՋԻ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/321 ընթացակարգի շրջանակներում 16.12.2021թ. ժամը 09:15-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

««Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամը, ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 02.12.2021թ. թիվ 09/3068 գրությամբ, հայտնել է հետևյալը.

«Հայտնում ենք Ձեզ այն մասին, որ 2021 թվականի նոյեմբերի 15-ին «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի /այսուհետ՝ Համալսարան/ կողմից հայտարարվել է «ԷԱՃԱՊՁԲ-2021/4-3-ԵՊԲՀ» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի միջոցով ապրանքների գնման ընթացակարգ: Ի թիվս այլ մասնակիցների հայտ են ներկայացրել նաև «ԷՖԲԻԷյ» ՍՊ և «ՋիԱրի» ՍՊ ընկերությունները:

Գնահատող հանձնաժողովի 2021 թվականի նոյեմբերի 24-ի 2-րդ նիստի 4-րդ որոշման 3-րդ և 8-րդ կետերով համապատասխաբար «ԷՖԲԻԷյ» ՍՊ և «ՋիԱրՋի» ՍՊ ընկերություններին առաջարկվել է մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները: Հանձնաժողովի քարտուղարն այդ մասին նոյեմբերի 24-ին էլեկտրոնային ձևով աճուրդների իրականացումն ապահովող համակարգի միջոցով ծանուցել է մասնակիցներին՝ առաջարկելու մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունները:

Սահմանված ժամկետում «ԷՖԲԻԷյ» ՍՊ և «ՋիԱրՋի» ՍՊ ընկերությունները կատարել են որոշակի շտկումներ, սակայն շտկման արդյունքում ապրանքների ամբողջական նկարագրերը չեն համապատասխանել հրավերի պահանջներին:

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N526-Ն որոշման 42-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով «ԷԱՃԱՊՁԲ-202114-3-ԵՊԲՀ» ծածկագրով գման ընթացակարգի հրավերների 1-ին մասի 8-րդ բաժնի 8.11-րդ կետի պահանջները՝ «ԷԱՃԱՊՁԲ-2021/4-3-ԵՊԲՀ» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 29.11.2021թ. 3-րդ նիստի 2-րդ որոշմամբ մերժվել են «ԷՖԲԻԷյ» ՍՊ ընկերության հայտով ներկայացված 39-րդ և «ՋիԱՐՋԻ» ՍՊ ընկերության հայտով ներկայացրած 2-րդ ու 25-րդ չափաբաժնները՝ հրավերով նախատեսված պայմաններին չհամապատասխանելու հիմքով:

«ԷՖԲԻԷյ» ՍՊ և «ՋիԱրՋի» ՍՊ ընկերությունների տվյալները գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով, Ձեզ ենք տրամադրում «ԷԱՃԱՊՁԲ-2021/4-3-ԵՊԲՀ» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հրավերի խնդրահարույց չափաբաժինների՝ գնումների պլանում ներառված լինելու փաստն ապացուցող քաղվածքները, հրավերի տեխնիկական բնութագրերը պարունակող քաղվածքները /ամբողջական հրավերը տեղադրված է www. gnumner.am և www. eauction.armeps.am կայքերում/, «ԷՖԲԻԷյ» ՍՊ և «ՋիԱրՋի» ՍՊ ընկերությունների կողմից ներկայացրած սկզբնական և շտկված հայտերի

արտատպումները էլեկտրոնային ձևով աճուրդների իրականացումն ապահովող համակարգից, ընթացակարգերի արձանագրությունների պատճեները»:

Այնուհետև ի պատասխան ՍՑ-ՆԳ-2021/321 ընթացակարգի շրջանակներում «ԷՖԲիԷյ» ՍՊ և «ՋիԱրՋի» ՍՊ ընկերությունների կողմից ներկայացված առարկություններին՝ հայտնել է հետևյալը.

«Քանի որ «ԷՖԲիԷյ» ՍՊ և «ՋիԱրՋի» ՍՊ ընկերություններին գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնվել է մեկ միասնական թիվ «ՍՑ-ՆԳ-2021/321» ծածկագրով ընթացակարգ, ուստի Ձեզ ենք ներկայացնում «ԷՖԲիԷյ» ՍՊ ընկերության կողմից 17.12.2021թ. և «ՋիԱրՋի» ՍՊ ընկերության կողմից 20.12.2021թ. Ձեզ ուղղված գրությունների վերաբերյալ «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի /այսուհետ՝ Համալսարան/ մեկ միասնական գրավոր կարծիքը:

Նախ անդրադառնանք «ԷՖԲիԷյ» ՍՊ ընկերության կողմից 17.12.2021թ. գրությանը:

Ստորև ներկայացնում ենք «ԷՖԲիԷյ» ՍՊ ընկերության կողմից շտկման արդյունքում 39-րդ չափաբաժնի համար ներկայացված արտադրողների ցանկը.

<u>Ջէկա Մեդիրայս Պանացեա Ֆարմասինո Լամեդ Տայ չանգ Ստերին Բիոմեդ Ռոյալ Սուջրս Էդգես Մեդիֆլոն Ձեջիանգ Հուաֆու Շրեյանս Օրանժ Պրոտոս Չանգժոու Սուջիքեյր Սաինթի Վենչժոու Բեյպու Մեդարգո Ստոն Մեդիքալ ՋեԿա Մեդիրայզ Վուքսի Տեքստիլ Ախթամար Նյուֆարմ Գորոդիշինսկայա ՏԴԼ Նավտեքս Յունիվերսալ Ապսանա Հելպ Վոգտ Թոփ գլով Ուայ էս փի Շանհայ ՌԱՆԹ Սվան Սաննի Շանդոնգ Ասապ Նիտեքս Պրոմեդ Հայ քեյր Մեդիպրիմ Քինգ Էկոֆարմ Կարբոն Մերկատոր Տիանջին ԳԴ պլաստ ԽՆԴԿ Լեյկո Այ Պլաստ Ֆարմլայն Բերգուս ՍՖՄ Բիոտիկի ԷՖ ԷԼ Մեդիկալ Մաստեր յունի Ալբա խելսկեա ինդաստրիալ կո ԷՍ ՊԻ ԷՄ Լիկվոր ֆարմատեք ԷլՍիԷս Դոբֆար Աջիո Բելկո Խինոին Գելտեկ Մեդիկա Վիններ ԷՍ ԴԻ Ռիչ Նաուկա 401 Հուինդա Անիկա-Ա ֆարմասինք ՍՌՄԻՏ Վոգտ մեդիքալ Դվ Բումագա Ամատո Դիագրամնիխ Բումագ ՍՄԴ ՎՄՎ Մեդպոլիմեր ԿԴՄ Բիոստրաս Կերստոն Մեդիկալենդ Կիտ Ապլոդենտալ Ռոմեդ Բերոմեդ Ալֆապլաստիկ Ան Մեդիկալ Չչանցզյան Ստար Մեդերեն Պլաստի Մեդ Նանկին Խուն Մեդ Բրաուն Նինբո Հայտեք Գրիտմեդ Չանչժոու Խաուսկան Մեդ Ցզյանսու Սյուն Մեդ Չժենցզյանսկայա ինտեգրալնայա մեդ կոմպանիյա Պոլիմերնիե իզդելիյա Սիմուրգ Ֆագտ մեդիկալ Տայցզուի Կանգժիան Գուանչժոու իմպրուվ</u>

Կարծում ենք, որ ներկայացված են աշխարհում սոնոգրաֆիայի գել արտադրող բոլոր ընկերությունները, բայց չենք կարող պնդել, քանի որ անվանումները նույնիսկ

տարանջատված չեն ստորակետերով, որպեսզի պարզ լինի, թե որտեղ է սկսվում և որտեղ ավարտվում արտադրողի անվանումը: Բացի այդ պնդում ենք, որ եթե անգամ վերոնշյալ բոլոր արտադրողների արտադրած սոնոգելերն ունեն միևնույն՝ «Սոնոգրաֆիայի գել» ապրանքային նշանը, «ԷՖԲիԷյ» ՍՊ ընկերությունը պարտավոր էր արտադրող ընկերությունների անվանումների քանակին համապատասխան քանակով ներկայացնել «Սոնոգրաֆիայի գել» ապրանքային նշանը կամ առնվազն նշում աներ այն մասին, որ ներկայացված բազմաթիվ արտադրողների սոնոգրաֆիայի գելերը ունեն միևնույն ապրանքային նշանը, քանի որ դա պահանջվել է 24.11.2021թ. թիվ 2 արձանագրության 4-րդ կետի 3-րդ ենթակետով՝ ներկայացնել ապրանքային նշանը կամ նշանները և դրանց համապատասխան արտադրողի անվանումը կամ անվանումները:

Ի հերքումն «ԷՖԲիԷյ» ՍՊ ընկերության այն պնդման, որ սոնոգել արտադրող բոլոր ընկերությունների ապրանքային նշանները նույնն են, ներկայացնում ենք մի քանի օրինակ. «АКУГЕЛЬ՝ МедиКрафт», «MEDIAGEL՝ GELTEK», «AQUASONIC 100՝ PARKER LABORATORIES, INC.»:

Այժմ անդրադառնանք «ՋիԱրՋի» ՍՊ ընկերության կողմից 20.12.2021թ. գրությանը:

Ստորև ներկայացնում ենք «ՋիԱրՋի» ՍՊ ընկերության կողմից շտկման արդյունքում 2-րդ չափաբաժնի համար ներկայացված արտադրողների ցանկը.

Ռեյանգ ԷլՍիԷս Դոբֆար Աջիո Աստրա Զենեկա Բրաուն Բելկո Խինոին Էգիս Էլֆա Ֆորտուն Ֆրեզենիուս Գեդեոն Ռիխտեր Հեմոֆարմ Հոֆֆման լա Ռոշ Ժոդաս Լեդեռլե Լիկա Մեդոխեմի Նովալեկ Օրիոն Ֆարմակոր Օքսֆորդ Պֆայզեր Պրոտեք Աբոլմեդ Ալիում Արմավիրսկայա Բիոֆաբրիկա Բելմեդ Բիոսինթեզ Բիոխիմիկ Բորիսովսկի Վելֆարմա Վի-ԷմՋի Գրոտեքս Դալքիմֆարմ Դեկո Կրասֆարմա Լեբեսֆալ Աբբոտտ Ռեյգ Խոֆրե Լինկոլն Վենուս Միկրոգեն Մոսկովսկայա ՄԷԳ Նիժֆարմ Նովոսիբխիմ Նովոֆարմ Օբնովլենիե Օզոն Սանբե Ռոուտեկ Ռուսֆարմա Սանջիվանի Սինթեզ Սլովյանսկայա Սոտեկս Ֆարմասինթեզ Ֆարմկոնցեպտ Ֆերմենտ Զեյսս Ֆարմ Էլլարա Էսկոմ ԷնՍիՓիՍի Ֆարմստանդարտ Զդորովյե Վերվագ Դարնիցա ԴԽՖ Բրինցալով Վիալ ՍԿՖԿ Հանկուկ Կորուս Ֆարմեկս Սերում Մեդանա, Մեդիկոն Ասպեն Ինդուստրիա Իտալիանա Ինտեգրատորի Սանոֆի Պոլֆա Մայլան Ուհան Նապրոդ ԳՄ Ֆարմասյուտիկալս Դոնգկուկ Գոսուն Ռեյոունգ Վենուս Կարնատակա Սելոն Բինոֆարմա Նեոն Սիպլա Լեկ Սանդոզ Ժուհաի Ունայթեդ Էլֆա Աբբվի Բիոլոգիչի Իտալիա Ֆամար Կանոն Վերոֆարմ Լենս Ալկոն Ալֆա վազելման Ալկալոիդս Ակվառիս Ինցեպտա Մեդա Ռեդիսս Ֆեռեր Գլաքսո Հիկմա Ջազեռա Լա Քեյր Նեքսթֆարմա Նոբել Սալուս ՍԱՆ Տեվա Տակեդա Յուսիբի Յունիքյու

Վեյվ Ագրովետզաշիտա Բիննոֆարմ Բրինցալով Գալիչֆարմ Ինտերֆարմա ԻՍՏ Կվադրատ ԿելունԿազ Լեկկո լեկ Մեդիսինթեզ Մոսագրոգեն Մոսկովսկայա Լատիվա Օրգանիկա Սակմա նուֆակտուրինգ Սկան Սկոպին Ֆարմակոր ֆարմզաշիտա ֆարմսինթեզ էյսիկա ֆարմակ Տրոիկա Աեսիկա Ռոմֆարմ Պիրամալ Մեդիսորբ, Ռուզֆարմա, Սումիտոմո Զամբոն Ինկոմեդ Ռաֆարմ Ջոդաս Վի էմ Ջի Ռեյգ Լաբ Ժոֆրե Լեբերլե Կարնատակա Անտիբիոտիկ Նովալեկ Վասսերբուրգեր Արզնայմիթթել ՄԷՋ Սլավյանսկայա ապտեկա Սագ Մանիֆակտուրինգ

Ինչպես տեսնում ենք, կրկին ներկայացված են աշխարհում ցեֆտրիաքսոն արտադրող գրեթե բոլոր ընկերությունները, սակայն դրանցից յուրաքանչյուրն ունի տարբեր ապրանքային նշան, օրինակ, «ՋիԱրՋի» ՍՊ ընկերության կողմից ներկայացված բազմաթիվ արտադրող կազմակերպությունների ցանկում առկա է «Հոֆֆման լա Ռոշ» արտադրող կազմակերպությունը, որի ապրանքային նշանն է «Ռոցեֆին», «Սանդոզ» արտադրող կազմակերպությունը, որի ապրանքային նշանն է «Լինդացին» և այլն, և «ՋիԱրՋի» ՍՊ ընկերությունը չի ներկայացրել դրանք ինչպես պահանջվել է 24.11.2021թ. թիվ 2 արձանագրության 4-րդ կետի 8-րդ ենթակետով՝ ներկայացնել ապրանքային նշանը կամ նշանները և դրանց համապատասխան արտադրողի անվանումը կամ անվանումները: Ներկայացված «Ցեֆտրիաքսոն 1000մգ» ապրանքային նշանով գրանցամատյանում գրանցված է միայն «Արփիմեդ» ՍՊ ընկերության դեղը, սակայն վերջինս որպես արտադրող կազմակերպության անվանում չի ներկայացվել:

Ստորև ներկայացնում ենք «ՋիԱրՋի» ՍՊ ընկերության կողմից շտկման արդյունքում 25-րդ չափաբաժնի համար ներկայացված արտադրողների ցանկը.

Միկրոգեն Սերում Ռեյանգ ԷլՍիԷս Դոբֆար Աջիո Աստրա Զենեկա Բրաուն Բելկո Խինոին Էգիս Էլֆա Ֆորտուն Ֆրեզենիուս Գեդեոն Ռիխտեր Հեմոֆարմ Հոֆֆման լա Ռոշ Ժոդաս Լեդեռլե Լիկա Մեդոխեմի Նովալեկ Օրիոն Ֆարմակոր Օքսֆորդ Պֆայզեր Պրոտեք Աբոլմեդ Ալիում Արմավիրսկայա Բիոֆաբրիկա Բելմեդ Բիոսինթեզ Բիոխիմիկ Բորիսովսկի Վելֆարմա Վի-էմՋի Գրոտեքս Դալքիմֆարմ Դեկո Կրասֆարմա Լեբեսֆալ Աբբոտտ Ռեյգ Խոֆրե Լինկոլն Վենուս Մոսկովսկայա ՄԷԳ Նիժֆարմ Նովոսիբխիմ Նովոֆարմ Օբնովլենիե Օզոն Սանբե Ռոուտեկ Ռուսֆարմա Սանջիվանի Սինթեզ Սլովյանսկայա Սոտեկս Ֆարմասինթեզ Ֆարմկոնցեպտ Ֆերմենտ Զեյսս Ֆարմ Էլլարա Էսկոմ ԷնՍիՓիՍի Ֆարմստանդարտ Զդորովյե Վերվագ Դարնիցա ԴԽՖ Բրինցալով Վիալ ՍԿՖԿ Հանկուկ Կորուս Ֆարմեկս Մեդանա, Մեդիկոն Ասպեն Ինդուստրիա Իտալիանա Ինտեգրատորի Սանոֆի Պոլֆա Մայլան Ուհան Նապրոդ ԳՄ Ֆարմասյուտիկալս Դոնգկուկ

Գոսուն Ռեյոունգ Վենուս Կարնատակա Սելոն Բինոֆարմա Նեոն Սիպլա Լեկ Սանդոզ Ժուհաի Ունայթեդ Էլֆա Աբբվի Բիոլոգիչի Իտալիա Ֆամար Կանոն Վերոֆարմ Լենս Ալկոն Ալֆա վազելման Ալկալոիդս Ակվառիս Ինցեպտա Մեդա Ռեդիսս Ֆեռեր Գլաքսո Հիկմա Ջազեռա Լա Քեյր Նեքսթֆարմա Նոբել Սալուս ՍԱՆ Տեվա Տակեդա Յուսիբի Յունիքյու Վեյվ Ագրովետզաշիտա Բիննոֆարմ Բրինցալով Գալիչֆարմ Ինտերֆարմա ԻՍՏ Կվադրատ ԿելունԿազ Լեկկո լեկ Մեդիսինթեզ Մոսագրոգեն Մոսկովսկայա Լատիվա Օրգանիկա Սակմա նուֆակտուրինգ Սկան Սկոպին Ֆարմակոր ֆարմզաշիտա ֆարմսինթեզ էյսիկա ֆարմակ Տրոիկա Աեսիկա Ռոմֆարմ Պիրամալ Մեդիսորբ, Ռուզֆարմա, Սումիտոմո Զամբոն Ինկոմեդ Ռաֆարմ Ջոդաս Վի Էմ Ջի Ռեյգ Լաբ Ժոֆրե Լեբերլե Կարնատակա Անտիբիոտիկ Նովալեկ Վասսերբուրգեր Արզնայմիթթել ՄԷՋ Սլավյանսկայա ապտեկա Սագ Մանիֆակտուրինգ

Կրկին նույն պատկերը: Բացի այդ պնդում ենք, որ եթե անգամ վերոնշյալ բոլոր արտադրողների արտադրած հակափայտացման անատոքսինները ունեն միևնույն՝ «Հակափայտացման անատոքսին 1մլ» ապրանքային նշանը, «ՋիԱրՋի» ՍՊ ընկերությունը պարտավոր էր արտադրող ընկերությունների անվանումների քանակին համապատասխան քանակով ներկայացնել «Հակափայտացման անատոքսին 1մլ» ապրանքային նշանը կամ առնվազն նշում աներ այն մասին, որ ներկայացված բազմաթիվ արտադրողների հակափայտացման անատոքսինները ունեն միևնույն ապրանքային նշանը, քանի որ դա պահանջվել է 24.11.2021թ. թիվ 2 արձանագրության 4-րդ կետի 8-րդ ենթակետով՝ ներկայացնել ապրանքային նշանը կամ նշանները և դրանց համապատասխան արտադրողի անվանումը կամ անվանումները:

Ցանկանում ենք Ձեր ուշադրությունը գրավել այն հանգամանքի, որ, օրինակ, «ՋիԱրՋի» ՍՊ ընկերության կողմից ներկայացված բազմաթիվ արտադրող կազմակերպությունների ցանկում առկա է «Սերում» ընկերության արտադրության հակափայտացման անատոքսինը, որը 0,5մլ-ոց է՝ հրավերով պահանջվող 1-ի փոխարեն:

Այժմ ընդհանրացնենք.

Ինչ վերաբերվում է «ՋիԱրՋի» ՍՊ ընկերության պայմանագրի կատարման փուլում ապրանքը չընդունելու, դրանից հետո ողջամիտ ժամկետ սահմանելու և հետո միայն պայմանագիրը միակողմանի լուծելու «առաջարկին», հայտնում ենք, որ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված պահանջներին համապատասխան, և պայմանագրում ներառվում են միայն հրավերի նվազագույն պահանջների բավարարող չափաբաժինները: Բացի այդ, Համալսարանը, որպես պատվիրատու, բազմիցս առնչվել է

տվյալ ընկերության և տվյալ ընկերության «ածանցյալ» հանդիսացող «Հերմինե Ֆարմեց» ՍՊ, «Ջի Թի Սի» ՍՊ, «Ջետտա» ՍՊ, «Աիդա Թրեյդ» ՍՊ, «Աբամա Թրեյդ» ՍՊ ընկերությունների պայմանագրային պարտավորությունները խախտելու խնդրին, ինչը խիստ խոչնդոտում է Համալսարանի ենթակայության տակ գործող հիվանդանոցային համալիրների աշխատանքը: Ի դեպ բոլոր թվարկված ընկերությունները, տարբեր պատվիրատուների նախաձեռնությամբ, ներառվել են գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում միևնույն հիմքով՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետ /խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը/:

Ինչ վերաբերվում է Համալսարանի կողմից մրցակցության սահմանափակմանը, ապա հայտնում ենք, որ «ԷԱՃԱՊՁԲ-2022/4-3-ԵՊԲՀ» գնման ընթացակարգին հայտ են ներկայացրել թվով 19 կազմակերպություն, միայն 2-րդ չափաբաժնին դրանցից չորսը, 25-ին՝ դրանցից երկուսը, 39-ին՝ դրանցից երեքը, իսկ եթե տեխնիկական բնութագրի որևէ պահանջ սահմանափակում էր մրցակցությունը, այդ մասին անհրաժեշտ էր բարձրաձայնել մինչև հայտերի բացումը:

Վերոգրյալով պայմանավորված խնդրում ենք «ԷՖԲիԷյ» ՍՊ և «ՋիԱրՋի» ՍՊ ընկերություններին ներառել գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում /թեպետ տեղեկացված ենք, որ 30.12.2021թ. ՀՀ գնումների հետ կապված բողոքը քննող անձի թիվ «ՍՑ-ԼՕ-2021/337» որոշմամբ «ՋիԱրՋի» ՍՊ ընկերությունն երկու տարի ժամկետով արդեն ներառվել է գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/321 ընթացակարգի շրջանակներում 16.12.2021թ. ժամը 09:15-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

5. <u>ՍՑ-ՆԳ-2021/321 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2021/321 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կարիքների համար հայտարարվել է «ԷԱՃԱՊՁԲ-2022/4-3-ԵՊԲՀ» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով, ի թիվս այլ մասնակիցների, հայտ են ներկայացրել «ԷՖԲիԷյ» ՍՊ և «ՋիԱրՋի» ՍՊ ընկերությունները:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 24.11.2021թ. նիստի թիվ 2 արձանագրության 4-րդ կետի 4.3-րդ և 4.8-րդ ենթակետերի համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է հետևյալը.

4.3 «ԷՖԲիԷյ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում բացակայում է Հավելված 1.2-ը /իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիրը/, անհրաժեշտ է ներկայացնել: 39-րդ չափաբաժնի համար անհրաժեշտ է հստակեցնել տարողությունը /առանց «ոչ պակաս քան» արտահայտության/, ներկայացնել ապրանքային նշանը կամ նշանները և դրանց համապատասխան արտադրողի անվանումը կամ անվանումները /ներկայացված են մի քանի երկրների անվանումներ, որոնց ներկայացման պահանջը հրավերով սահմանված չէր/:

4.8 «ՋիԱրՋի» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում բացակայում է Հավելված 1.2-ը /իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիրը/, անհրաժեշտ է ներկայացնել: 2-րդ և 25-րդ չափաբաժինների համար անհրաժեշտ է ներկայացնել ապրանքային նշանը կամ նշանները և դրանց համապատասխան արտադրողի անվանումը կամ անվանումները /ներկայացված են մի քանի երկրների անվանումներ, որոնց ներկայացման պահանջը հրավերով սահմանված չէր:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը նույն արձանագրությամբ որոշում է կայացրել նիստը մեկ աշխատանքային օրով կասեցնելու վերաբերյալ՝ Ընկերություններին առաջարկելով ծանուցումը ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 29.11.2021թ. նիստի թիվ 3 արձանագրությամբ մասնավորապես արձանագրվել է հետևյալը.

«Նոյեմբերի 24-ին էլեկտրոնային ձևով աճուրդների իրականացումն ապահովող համակարգի միջոցով ծանուցել է մասնակիցներին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունները»: Սահմանված ժամկետում.

1. «ԷՖԲիԷյ» ՍՊԸ-ն շտկել է արձանագրված անհամապատասխանությունների մի մասը, սակայն ներկայացված բազմաթիվ արտադրող կազմակերպություններին

համապատասխան չեն ներկայացվել ապրանքային նշաններ ինչպես նշված էր 2-րդ արձանագրության 4-րդ կետի 3-րդ ենթակետում և պահանջված էր էլեկտրոնային ձևով աճուրդների իրականացումն ապահովող համակարգում:

2. «ՋիԱրՋի» ՍՊԸ-ն շտկել է արձանագրված անհամապատասխանությունների մի մասը, սակայն 25-րդ չափաբաժնի համար ներկայացված բազմաթիվ արտադրող կազմակերպություններին համապատասխան չեն ներկայացվել ապրանքային նշաններ ինչպես նշված էր 2-րդ արձանագրության 4-րդ կետի 8-րդ ենթակետում և պահանջված էր էլեկտրոնային ձևով աճուրդների իրականացումն ապահովող համակարգում, իսկ 2-րդ չափաբաժնի համար ներկայացված բազմաթիվ արտադրող կազմակերպություններին համապատասխան ՀՀ-ում գրանցված դեղերի պետական գրանցամատյանում (ռեեստր) «Ցեֆտրիաքսոն 1000մգ» ապրանքային նշանով գրանցում չկա, այդ ապրանքային նշանով գրանցված է միայն Արփիմեդ ՍՊ ընկերության դեղը, սակայն Արփիմեդ ՍՊԸ՝ որպես արտադրողի անվանում հայտով չի ներկայացվել:

5. Նույն արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշում է կայացրել Ընթացակարգի 39-րդ չափաբաժնի մասով «ԷՖԲիԷյ» ՍՊԸ-ի հայտը, իսկ «ՋիԱրՋի» ՍՊԸ-ի հայտը 2-րդ և 25-րդ չափաբաժինների մասով՝ հրավերով նախատեսված պայմաններին չհամապատասխանելու հիմքով, Կարգի 42-րդ կետի համաձայն մերժելու վերաբերյալ:

6. <u>ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 09.12.2021թ. թիվ 26/26-1/20213-2021 գրությունը, «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի 02.12.2021թ. թիվ 09/3068 գրությունը՝ կից փաստաթղթերով և ՍՑ-ՆԳ-2021/321 ընթացակարգի շրջանակներում Ընկերությունների կողմից ուղարկված առարկությունների վերաբերյալ ներկայացրած դիրքորոշումը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը

ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում սպանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ ***գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,***

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ***հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:***

ՀՀ կառավարության 18.05.2017թ. N 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 10-րդ կետի համաձայն՝ էլեկտրոնային աճուրդով գնումների կատարման և ընտրված մասնակցի հետ պայմանագրի կնքման ժամանակ գործում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված կարգով նախատեսված կարգավորումները...:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես

իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 41-րդ կետով սահմանվում է, որ ***<u>եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:</u>***

Ընդ որում Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: ***<u>Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:</u>***

Այսպես, «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կարիքների համար հայտարարվել է «ԷԱՃԱՊՁԲ-2022/4-3-ԵՊԲՀ» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ, որին մասնակցելու նպատակով, ի թիվս այլ մասնակիցների, հայտ են ներկայացրել «ԷՖԲիԷյ» ՍՊ և «ՋիԱրՋի» ՍՊ ընկերությունները:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 24.11.2021թ. նիստի թիվ 2 արձանագրության 4-րդ կետի 4.3-րդ և 4.8-րդ ենթակետերի համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է հետևյալը.

4.3 «ԷՖԲիԷյ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում բացակայում է Հավելված 1.2-ը /իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիրը/, անհրաժեշտ է ներկայացնել: 39-րդ չափաբաժնի համար անհրաժեշտ է հստակեցնել տարողությունը /առանց «ոչ պակաս քան» արտահայտության/, ներկայացնել ապրանքային նշանը կամ նշանները և դրանց համապատասխան արտադրողի անվանումը կամ անվանումները /ներկայացված են մի քանի երկրների անվանումներ, որոնց ներկայացման պահանջը հրավերով սահմանված չէր/:

4.8 «ՋիԱրՋի» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում բացակայում է Հավելված 1.2-ը /իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիրը/, անհրաժեշտ է ներկայացնել: 2-րդ

և 25-րդ չափաբաժինների համար անհրաժեշտ է ներկայացնել ապրանքային նշանը կամ նշանները և դրանց համապատասխան արտադրողի անվանումը կամ անվանումները /ներկայացված են մի քանի երկրների անվանումներ, որոնց ներկայացման պահանջը հրավերով սահմանված չէր:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը նույն արձանագրությամբ որոշում է կայացրել նիստը մեկ աշխատանքային օրով կասեցնելու վերաբերյալ՝ Ընկերություններին առաջարկելով ծանուցումը ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 29.11.2021թ. նիստի թիվ 3 արձանագրությամբ մասնավորապես արձանագրվել է հետևյալը.

«Նոյեմբերի 24-ին էլեկտրոնային ձևով աճուրդների իրականացումն ապահովող համակարգի միջոցով ծանուցել է մասնակիցներին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունները»: Սահմանված ժամկետում.

1. ***«ԷՖԲիԷյ» ՍՊԸ-ն*** շտկել է արձանագրված անհամապատասխանությունների մի մասը, սակայն ***ներկայացված բազմաթիվ արտադրող կազմակերպություններին համապատասխան չեն ներկայացվել ապրանքային նշաններ ինչպես նշված էր 2-րդ արձանագրության 4-րդ կետի 3-րդ ենթակետում*** և պահանջված էր էլեկտրոնային ձևով աճուրդների իրականացումն ապահովող համակարգում:

2. «ՋիԱրՋի» ՍՊԸ-ն շտկել է արձանագրված անհամապատասխանությունների մի մասը, սակայն ***25-րդ չափաբաժնի համար ներկայացված բազմաթիվ արտադրող կազմակերպություններին համապատասխան չեն ներկայացվել ապրանքային նշաններ ինչպես նշված էր 2-րդ արձանագրության 4-րդ կետի 8-րդ ենթակետում*** և պահանջված էր էլեկտրոնային ձևով աճուրդների իրականացումն ապահովող համակարգում, իսկ ***2-րդ չափաբաժնի համար ներկայացված բազմաթիվ արտադրող կազմակերպություններին համապատասխան ՀՀ-ում գրանցված դեղերի պետական գրանցամատյանում (ռեեստր) «Ցեֆտրիաքսոն 1000մգ» ապրանքային նշանով գրանցում չկա, այդ ապրանքային նշանով գրանցված է միայն Արփիմեդ ՍՊ ընկերության դեղը, սակայն Արփիմեդ ՍՊԸ՝ որպես արտադրողի անվանում հայտով չի ներկայացվել:***

Նույն արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշում է կայացրել Ընթացակարգի 39-րդ չափաբաժնի մասով «ԷՖԲիԷյ» ՍՊԸ-ի հայտը, իսկ «ՋիԱրՋի» ՍՊԸ-ի հայտը 2-րդ և 25-րդ չափաբաժինների մասով՝ հրավերով

նախատեսված պայմաններին չհամապատասխանելու հիմքով, Կարգի 42-րդ կետի համաձայն մերժելու վերաբերյալ:

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ «ԷՖԲիԷյ» ՍՊ և «ՋիԱրՋի» ՍՊ ընկերությունները Կարգի 41-րդ կետի համաձայն ծանուցվել են անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ, սակայն սահմանված ժամկետում անհամապատասխանությունները չեն շտկել, այսինքն՝ «ԷՖԲիԷյ» ՍՊ և «ՋիԱրՋի» ՍՊ ընկերությունները «ԷԱՃԱՊՁԲ-2022/4-3-ԵՊԲՀ» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում թույլ են տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված խախտում, ուստի առկա են վերջիններիս գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 09.12.2021թ. թիվ 26/26-1/20213-2021 գրությամբ «ԷՖԲիԷյ» ՍՊ և «ՋիԱրՋի» ՍՊ ընկերություններին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և Ընկերություններին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**